ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
8	Լիդեր Սոֆտ	ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ	Հականեխիչ լվացող միջոցն իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստի մածուցիկ անգույն /կամ ներկանյութի գույնով/ թափանցիկ առանց հոտի կամ կիրառվող հոտավետիչի հոտով հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է տրիկլոզան, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ՝ (նատրիումի լաուրիլ սուլֆատ, կիտրոնաթթու, պրոպիլենգլիկոլ), այդ թվում մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), մաշկը խոնավացնող և խնամող բաղադրիչներ, ապաիոնիզացված ջուր: և այլ: Հականեխիչ լվացող միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական (բացառությամբ տուբերկուլոզի միկոբակտերիաների) և գրամբացասական մանրէների նկատմամբ: Միջոցն օժտված է արտահայտված լվացող հատկություններով: Չի չորացնում ձեռքերի և մարմնի մաշկը, հիպոալերգիկ է, pH-ը չեզոք է: Հականեխիչ լվացող միջոցը նախատեսված է հականեխիչով մշակումից առաջ բժշկական անձնակազմի (այդ թվում՝ վիրաբույժների) ձեռքերի հիգիենիկ մշակման համար, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների կողմից

			բժշկական միջամտություններ անցկացնելուց առաջ և հետո ձեռքերի հիգիենիկ մշակման համար, բժշկական օգնության դիմած անձանց ձեռքերի հիգիենիկ մշակման և մաշկային ծածկույթների սանիտարական մշակման համար: Փաթեթավորումը 1լ պոլիէթիլենային տարաներով: Ունի մղիչ պոմպ, 1 մղումը՝ 2-3 մլ: Միջոցի պահպանման ժամկետը 5 տարի է: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ: Նոր է, չօգտագործված: Մատակարարման պահին ապրանքի պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱՉ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
8			